Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



- **Մեզ հարկավոր է, որ աշակերտը ոչ միայն հասկանա բառերը և նոցա մասերը, այլև իրերը, առարկաները և նոցա մասերը, որպեսզի ոչ միայն կարողանա պատմել յուր լսածն ու կարդացածը, այլև նկարագրել իր տեսածը…**
- **Ղազարոս Աղայան**

Հետազոտության նպատակը՝ բացահայտել առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Թեմայի արդիականությունը՝ առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ կանգ ենք առել երեխաների ուսումնառության ընթացքում արժեքային համակարգի ձևավորման վրա:

Հետազոտության խնդիրները

- 1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
- 2. վերլուծել դասապրոցեսը
- 3. սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները
- 4. սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Համաշխարհային կրթական զարգացումներում նկատվում են հանրակրթության բովանդակության ձևավորման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումներ, որոնք որդեգրվում, ներմուծվում են նաև ազգային ուսուցման համակարգ:

- *Առաջինը* հասարակության պահանջներին համապատասխանության սկզբունքն է
- *Երկրորդ* սկզբունքը բովանդակային և գործընթացայնության հաշվառման ֆունկցիան է
- *Երրորդ*. կառուցվածքային միասնության սկզբունք . նրա ձևավորման տարբեր մակարդակներում

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉ-ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿԵՐՊԱՐԸ, ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Մանկավարժական մեթոդաբանության մեջ կարևոր է հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունքը: Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:

Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի, մենք սահմանել ենք որոշակի քայլարշավ.

- Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի, մենք սահմանել ենք որոշակի քայլարշավ.
- 1. ստեղծել ենք բարյացակամ միջավայր,
- 2. ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն,
- 3. ընտանիքներին ընձեռել ենք մեզ հետ համագործակցելու հնարավորություն,
- 4. առաջնորդվել ենք մեր աշակերտների անհատական կրթական կարիքներով,
- 5. աջակցություն ենք ստացել դպրոցի տնօրենից ՝ համագործակցել կոլեգաների հետ, մասնակցել դասապրոցեսներին, փոփոխել դասացուցակը
- 6. Համատեղ դասավանդում սկսել ենք փոքր քայլերից. նախ վերցրել ենք մեկ առարկա՝ մայրենի, հետո աստիճանաբար , սովորողների համար աննկատ կերպով նաև համատեղել մնացած առարկաները դասավանդող ուսուցիչների ջանքերը:

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

- Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեության ընթացքն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները

Դաստիարակության առանձնահատկությունները

- -օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հանդես գալը,
- - միանգամից չերևացող կողմը,
- - երկարատևությունը,
- -կոմպլեքսային բնույթը,
- -երկկողմանի բնույթը,
- -ամբողջական բնույթը,

Դպրոցում աշխատանքային դաստիարակությունը ներառում է.

- Ա. ուսումնական աշխատանքը
- Բ. պոլիտեխնիկական գիտեիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը
- Գ. ուսումը
- Դ. տեխնոլոգիա և կերպարվեստ առարկաները

Ուսումնական աշխատանքը այն հիմնական բաղադրատարրն է, որը հնարավորություն է ընձեռում դպրոցականներին նախապատրաստվել գործնական աշխատանքի և պատրաստակամ լինել աշխատելու իր ժողովրդի և հայրենիքի համար։

Փորձի արդյունքում գրանցել ենք հետևյալ պատկերը:



- ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
- ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
- ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
- ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
- Առաջին վեցնյակը

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԷՊՈՍԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:



Վենի դիագրամ

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Եթե փորձենք համեմատել Վենի դիագրամը Տ-աձև աղյուսակի հետ, ակնհայտ կլինի, որ Վենի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու (երեք...) հասկացությունների ընդհանրությունները և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները.



Քառաբաժան

Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանը շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ (գրատախտակ...), որն անհրաժեշտ է բաժանել չորս մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում: Ստորև ներկայացված է քառաբաժան աղյուսակի երկու ձև: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին, հետևաբար, նպատակահարմար չէ դրանք փոփոխել: Կարելի է, իհարկե, դրանք զարգացնել՝ նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները, օրինակ՝ ըստ Բլումի դասակարգման.

- Ա)
- 1. Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս:
- Զգայություններ.
- տեսողական
- լսողական
- զգացողական
- համի և հոտի

2. Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս:
վերաբերմունք
հույզեր
զգացմունքներ
3. Կապը ձեր և իրական կյանքի հետ:
ասոցիացիաներ
առնչություններ
օրինակներ
4. Նոր վերնագիր:
ընդհանրացում
վերաիմաստավորում
գնահատում

Բ)
1. Ի՞նչ ձայներ լսեցիք:
2. Պատմվածքի տրամադրությունը
3. Երկու բանալի բառ:
4. Պատմվածքի թեման՝ սեփական բառերով:

Հեղինակի աթոռ

- Այս մեթոդը կիրառվում է դասի կշռադատման փուլում: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ինքնադրսևորվելու, նրանց մեջ մեծացնում է պատասխանատվության զգացումը, սեփական խոսքը ներկայացնելու կարևորության գիտակցումը: Միաժամանակ մեծ խթան է ստեղծագործական մտքի զարգացման համար:
- Յուրաքանչյուր սովորող իր գրած նյութը, հանձնարարությունը ներկայացնում է ոչ թե տեղից, այլ դասասենյակի կենտրոնում դրված աթոռին նստած, որի վրա գրված է 'Հեղինակ': Հեղինակի աթոռին նստելը պաշտոնական հնչեղություն է տալիս նրանց խոսքին: Միևնույն ժամանակ, այն նպաստում է սեփական խոսքին հետևելուն, խոսքի արժեքը գիտակցելուն: Մենք հանձնարարեցինք ներկայացնել Դավթի կերպարը, պատասխանելով մի քանի հարցերի.
- Քեզ դու՞ր է գալիս Սասնա Դավթի կերպարը, ինչո՞վ է նա առանձնահատուկ, կցանկանայի՞ր նմանվել նրան , նրա ո՞ր քայլերն են քեզ դուր գալիս:

m-աձև աղյուսակ

Դրական կողմեր **Չեզոք կողմեր** **Բացասական կողմեր**

- m-աձև աղյուսակը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Այն կարող է գործածվել թե' անհատական աշխատանքի, թե' խմբային քննարկումների ժամանակ:

ԳՈՒՍ (Գիտեմ – Ուզում եմ սովորել – Սովորել եմ)

Գ Ու Ս
ԳԻՏԵՄ, ՈՒԶՈՒՄ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ ԵՄ

Մեթոդը կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը կարդալու ընթացքում:

ԸՆՏՐՎԱԾ ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		
ԳԻՏԵՄ	ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ	ՍՈՎՈՐԵԼ ԵՄ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:
- Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:
- Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյական դաստիարակության դերը:
- Դպրոցական տարիքում բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է:
- Աշակերտների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում, առավելապես՝ գրականության :
- Դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների, համակեցության պարզ ունակությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների ձեռբերումը:
- Մեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ:
- Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ